



### 13. ՍՊԻՏԱԿ ՉԿԱՆ ՀԵՔԻԱԹԸ

Մի ձկնապան է լինում, մի տղա է ունենում: Ամեն օր իր տղեն վերցրած գնում է ձկան ու նրանով իր ընտանիքը կառավարում: Մի օր էլ այսպես նա իր տղին վերցնում է ու գնում ձկան:

Հենց թողը գցում է՝ մի շատ սիրուն ձուկ է դուրս գալիս. նա տալիս է տղին, ասելով.

— էս տար մորդ տուր, թող էփի, ես՝ իսկույն գալիս եմ, էս պիսի լավ ձուկը ափսոս է, որ ծախեմ: Տղի գոգում փաթաթում է ու հետ տուն դրկում: Նա կարծես չի ուզում հետ գնալ. ափսոսք գալիս է էսպիսի լավ ձուկը տանել մորը տալ, որ խաշի. մի կողմն է թեքվում ու ջուրը գցում:

Հայրը թողը գցում է ու նույն ձուկը բռնում:

էն էլ է տալիս որդուն, ասելով.— էս էլ երկու, դե գնա՛:

Նա էլի մի կողմն է կանգնում ու գցում ծովը: էլի հոր թողը հանում է. տալիս է որդուն, թե՛ արդեն էս երեք ձկները բավական է մեզ ճաշին:

Նա գնում է, բայց ճանապարհին էլի ջուրն է գցում ու դատարկ տուն է դառնում: Երեկոյան հայրը տուն է գալիս, հուսալով որ լավ ձուկ պիտի ուտի, բայց մնում է զարմացած, երբ կինն ասում է, որ ձուկ չի բերել տղեն:

Հայրը որդու վրա շատ է բարկանում, դուրս է անում տանից, հրեք հաց է տալիս, ասում.

— Գնա՛, ճանապարհին եթե մարդ պատահի ու ասի՝ արի՛ ընկերանանք, դու ասա՛ դեռ արի նստենք, հաց ուտենք, հետո. ով հացի ծայրից կկտրի՝ նրա հետ ընկերացի, իսկ եթե կողքից՝ նրա հետ չընկերանաս:

Որդին խոստանում է կատարել հոր պատվերը ու ճանապարհ / ընկնում: Մի մարդ է պատահում, հարցնում է, թե նա ուր է գնում: Նա պատասխանում է, թե ինքն էլ չգիտե:

Ասում է անծանոթը.— Արի՛ ընկեր դառնանք:

Բայց սա ասում է, որ առաջ հաց ուտենք: Նրանք նստում են հաց ուտելու: Անծանոթը հացի կողքից է կտրում, սա նրա հետ ընկերութունից հրաժարվում է ու առաջ գնում: Ճանապարհին էլի մի մարդ է պատահում, ուզում է ընկերանալ, բայց հաց ուտելիս, առաջինի պես էլի հացի կողքից է կտրում, ու սա չի ընկերանում: Շատ առաջ է գնում, մի շինարի ծառի տակ, մի Սիպտակ ձիու վրա նստած մարդու է պատահում, նա ևս ուզում է ընկերանալ: Նստում են հաց ուտելու, սա հացի ծայրից է կտրում, ու նա սրա հետ ընկերանում է: Երկսով իբրև եղբայր գնում են մի մեծ քաղաք հասնում:

Անծանոթն ասում է.— Իմ ձին էստեղ ծախենք ու էն փողով առուտուր անենք:

Նա իր Սիպտակ ձին ծախում է հարյուր հիսուն մանեթով ու սկսում են վաճառականութուն անել: Մեծ փող են աշխատում: Անծանոթն ուզում է նրան պսակի. սա ասում է, որ ինքը փոքր է նրանից, նախ ինքը պիտի պսակվի: Բայց անծանոթը նրան զոռում է, ու նա ճարահատված ասում է՝ կպսակվեմ: Ասում է, թե ո՞ւմ աղջիկն ուզեն, նա ասում է՝ ես ի՞նչ գիտեմ:

Անծանոթը ասում է.— Քաբավորի աղջիկը կուզես:

Նա մնում է զարմացած, ասում է, թե իրան ո՞վ կտա Քաբավորի աղջիկը: Բայց անծանոթը մարդ է զրկում Քաբավորի մոտ ու նրա աղջիկը ուզում: Քաբավորն էլ զարմանում է, թե էդպիսի մի հասարակ մարդ ինչպես է համարձակվում իր աղջիկը ուզել:

Քաբավորը մարդ է զրկում նրա մոտ ու փորձելու համար ուզում է մի բեռը հին քիսա. նա տալիս է. էլի ավելի հին քիսա փող է ուզում. նա դարձյալ ուղարկում է, ու մնում է զարմացած,

կանչում է ու իր սղչիկը տալիս նրան. օխան օր, օխտր գիշեր հարսանիք են անում:

Ձկնապանի տղեն խնդրում է թաքավորից, որ գնա իր հորն ու մորն էլ բերի ու էսպես կենա իր մոտ: Մեծ պատվով նրան ճանապարհ է գցում թաքավորը:

Երկու ընկերները երբ հասնում են այն ծառի տակը, որտեղ իրար հետ ընկերացել էին, նա ասում է.

— Մենք այստեղ ընկերացանք, էստեղ էլ արի բաժանվենք. ես էն Սիպտակ ձուկն եմ, որ դու ինձ ջուրը գցեցիր ու ես նրա փոխանակ ինչքան կարողացա՝ քեզ լավություն արի. էն ձին, որ ես նստել էի, սուրբ Գևորգի Սիպտակ ձին էր. ձեն է տալիս՝ ձին կանգնում է նրա առաջ ու նա նստում է ձիու վրա, ճանապարհ է գցում նրան հորն ու մոր մոտ:

Ձկնապանի տղեն ջատ է խնդրում, որ իրանից չհեռանա, բայց սա չի լսում ու բաժանվում են իրարից: Ձկնապանի աղեն գնում է իր հորն ու մորը վերցնում՝ թաքավորի մոտ գալիս, տարիներ ապրում են իրար հետ:

